

Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն

Երկար ատեն ձիով պտրտեցայ Պաղեստին, տեսայ այդ երկիրը, քննեցի աւերակները, շատ ժամանակ վայելեցի իր մաքուր օդն և գեղեցիկ տեսարանները. քանի անգամ արժանացայ համբուրել Անոր ոտից հետքերը՝ զոր ամենայն քրիստոնեայ կը պաշտէ։ Գնացի բեթղեհէմ, Երուսաղէմ, Զիթենեաց լեռը, ի բեթանիա, յերիքով, Յորդանանու ափունքը, Մեռեալ ծով, ի Նազարէթ, ի Տիրեբրիա, ի Թաբոր, ի Նայիմ, Կանա, Կափառնաուժ, Կեսարիա, Տիւրոս և Սիդոն, վերջապէս այն ամէն տեղերը՝ զորս Յիսուս սրբացուցած էր։ Եւ որովհետեւ ողջ և առողջ դարձայ, և իր յիշատակներն դեռ յիս կենդանի են, սկսայ նորէն իմ վրաս ըրած ազգեցութիւնքը մանր զննել, և կարգաւորելով ու խուզարկելով գաղափարներս՝ ապշեցայ, արտիս զգալածներն՝ հաւատքիս ունեցած վստեհութիւնով քննեցի և կրցածս ըրի՝ չտի՛հէն ալ աւելի։.....

Երկու հարցմանը միայն կը լինին Պաղեստինէն դարձող ճանապարհորդաց, և զորս ես ալ շատ անգամ իմ բարեկամներէս լսեցի։ Հրէաստանէն դառնալէս ետքը. — Ի՞նչ տեսակ երկիր է Հրէաստան. — Ի՞նչպէս գտար։ — Այս երկու հարցմանցս իբրեւ պատասխան՝ երանի թէ կարենամ ի հեռուստ, իբրեւ հայելւոյ մը մէջէն, ճշիւլ ցուցնել այդ միակ երկիրը. և դարձեալ հազար երանի թէ՛ կարենամ իմ զգացածներս և գաղափարներս պարզութեամբ բացատրել։ — Այս ամէն որբազան տեղերս տեսած և զննած ատենս արդեօք կարելի է պատմել թէ քանի աստուածային յիշատակներով սիրտս կը յափըշտակուէր և կը վառէր. այդ հաւատոց և սիրոյ սուրբ զգացմունքն՝ հաստատապէս և ոչ ուրեք բնաւ ունեցեր եմ կենացս մէջ։

Պաղեստինի դիրքն իմանալու համար՝ դիմացնիս դնենք երկրագունտն, դիտենք Միջերկրականն՝ որուն ալիքներն զԱփա զՎերիկէ և զԵւրոպա կը թրջեն. այդ կողմն ուսկից արեւուն առաջին փառքն և փայլն կը տեսնուի՝ թերակղզի մը կայ, և այդ է Պաղեստին աշխարհն։ Սահմանափակ և սքանչելի երկիր մ'է, որ ոչ կրնայ ընդարձակել և ոչ ամփոփուիլ։ Ինչ որ Աստուած դրաւ՝ այդ է իր սահմանն։ Յարեմոյից ծովն է իր սահմանագլուխն, զոր անհնար է հեռացնել։ Ի հարաւոյ մեծ անապատն՝ որուն սիրապետել անհնար է. հիւսիսէն Լիբանոն և Սհերմոնի ձիւնաթաղ դազալին։ Լեռները կրնանք ծակել, կըռնանք չընապատել, բայց չտի՛հել և գուրել բնաւ։ յարեւելից Յորդանան, որ իր երազընթաց ալիքներովն կը թափի ահագին խորածորի մը մէջ, որ իբրեւ ջրոյ պատնէշ մը կը զատէ զՊաղեստին արեւելեան երկիրներէն։ Այս հովիտս իրահաւոր խորութեամբն երկրագնդին վրայ առաջինն է, հիւսիսային ծայրն Միքեբեայ ծովակին քովերը՝ Միջերկրականին երեսէն երկու հարիւր մէդրէ աւելի խոր է, և Մեռեալ ծովուն քովերն չորս հարիւր մէդր։ յայտնի է՝ որ ինչպէս անհնար է ծովը հեռացնել, լեռներն հարթել, նոյնպէս նաեւ անկարելի է Յորդանանու ձորը լեցնել։ Այսպէս ահա իր արեւելեան սահմանը զըծուած է։ Այս է Հրէաստանի սահմաններն՝ զոր Աստուծոյ ամենակալ աշխարհաւանած է. այս չորս սահմանափակ գիծերու մէջ կը պարունակի Սուրբ Երկիրն, փոքրիկ աշխարհ մ'է, որուն նման չէ եղած, հիւսիսային լայնութեան երեք աստիճանաց մէջ և երկու արեւելեան երկայնութեանց միջոց կը բովանդակուի՝ հազար երեքհարիւր քառակուսի մղոն. բայց այս պզտիկ երկիրս յա-

իտոնեից նախաստհմանեալ տեղ մ'է, մոգական սքանչելի լուսով մը պայծառացած է, լուսատանի մ'է:

Մարդուս սկիւր կարծուած իր մը՝ աստուածային խորհրդոց խորոց մէջ շատ մեծ բանի վիճակած է. այս բանս յայտնապէս տեսնուեցաւ նաև Հրէա-ոտանի վրայ. այդ ամենախեղճ երևցած երկիրն՝ երկու մեծամեծ հաւատոց խանձարուրք եղաւ. առաջինն անկատար կերպարանք՝ հրէութիւնն էր. իսկ երկրորդն՝ կատարեալն՝ քրիստոնէութիւնն: Թողով մը այս խօսակցութիւնքս, որոնց վրայ արդէն իսկ չեմ կրնար երկարել, տեսնե՛ք թէ ինչու համար Սուրբ երկիրն կեդրոն է մարդկութեան և մէկ հատիկ միայն աշխարհիս վրայ:

Երբ մէկն ուզենայ երկրի կամ որ և է աշխարհի մը վրայ դատաստան ընել՝ բաւական չէ որ միայն նիւթական կերպով մտածէ. պակը տալու համար՝ չի բաւեր պարզ բերրի և արգաւանդ կամ ընդարձակ և կամ լեռնոտ լի-նեւն, շատ մը գետեր՝ աղբիւրներ և ճառագանքներ գիրութիւն ունենալն. այլ ի՞նչ է կ'ուզենք ազնիւ դատաստան կտրել պէտք է նաև նայի՛ք թէ ի՛նչ տունկեր բուսուցած է: Ամէն երկիր ալ ակօս մ'է, ըստ որում պէտք է որ բան մ'ալ ինքն բուսցնէ. ուրիշն ամէն երկիր իր պտղէն կը ճանչցուի և կը դատուի: Այն երկիրն որ առատ կը պտղաբերէ՝ յայտնի է որ լաւագոյնն է. այն բլուրն՝ ուսկից անցիւ խաղող կ'եղնէ, աւելի բերրի է քան այն դաժ ու խեղճ դաշտորայ-քըն, ուր միայն պտուղն կ'առատա-նայ, որ թերիս միայն պարարտութեան կը ծառայէ: Յիսուս Քրիստոս այն անճառելի ամենաբաւական Աստուածա-յին պտուղն՝ այս աշխարհիս խորշն մէջ հասունացաւ, այս է Պաղեստինի պատին: Յիսուսի հայրանիքն եղաւ Պաղեստին, այս միայն բաւական է ի-րեն. հոն ծնաւ Յիսուս Ժայռի մը ու-քը, Յուդայաստանի քարայրի մը մէջ՝ 'ի Բեթղեհէմ. սնաւ 'ի Նազարէթ՝ Գա-լիլիոյ լեռանց մէջ, ծածուկ և քա-

շուած բոլորովին: Նազարէթ քաղաքն կամ լաւ ևս գիւղաքաղաքն՝ Յեզրայելի դաշտը դատող լեռանց ոտքն է, Միջեր-կրականին երեսէն գրեթէ չորս հարիւր մէդր բարձրութեամբ, չորս կողմը պըղ-տիկ, մերկ բլուրներով, առանց ամե-նեկին ծառի մը նշանի: Այդ բլրոց մէ-ջէն ամենէն բարձրն՝ ընդարձակ և լու-սափայլ հորիզոն ունի, յարեւելից ու-նենալով Մովաբայ կապուտակ լեռ-ներն, յարեւմտից Կարմելոս և Միջեր-կրականն, հիւսիսէն վերինն Գալիլիա, ճերմակ լեռան սոսկալի սարերովն. հա-րաւէն թափօր, Գեբլուայ լեռներն և Շամրին:

Գալիլիա աչքիդ գիմացն է. հոն մեծ-ցաւ Յիսուս Քրիստոս, Ժայռի մը վրայ ծնանելով, կամ թէ ըսեմ Հրէաստանի լեռանց անշէն բլուրներուն մէկուն վը-րայ. անցաւ անապատը և գնաց սփին-քսի մը և բուրգերուն ոտքը, և անկէ ալ ելնելով լեռան մը վրայ՝ երեսուն տարի անցուց անխօս ամենեկին. որո-շուած Ժամանակին երեսուն տարի վեր-ջը՝ իլաւ Յորդանանու ձորը, Տիբերիսոյ ծովափանց վրայ, այս խաղող ծովա-կիս և իր ափանց երկայնութեամբ իր ամենէն գերազանց պայծառութիւնը ցուցնելով՝ կը սկսի մանելու 'ի տը-խուրն Յուդայաստան, և կը դիմէ յե-րուսաղէմ՝ ուր իր առաքելութիւնը մա-հաւաք կը կնքէ, այն որ երկրիս մի-ջակէսն է և աշխարհիս արեւը, առ որ կը դառնանք քանի անգամ՝ որ զարթ-նուն 'ի մեզ՝ վեհագունին, իմանալոյն և Աստուծոյ գաղափարներն:

Իսկ այսօր Հրէաստան տխուր և ա-մայի երկիր մ'է, որ մեծ է մահուան և արդէն իսկ մեռած է: Կ'ուզեմ նկարը տեսնել. — Երբ նաւն Յուդայէ մտնէ, ուր որ արեւմուտքէն գնացող նաւերն կը կենան, աչքիդ գեղնափոյն գիծ մը կը զարնէ, Յուդայէի ծովափունքն է. քիչ մը հեռու՝ աւելի ցած՝ հորիզոնը եր-կնագոյն ահագին կարկառներ բռնած են, արեւելեան Հրէաստանի և քիչ մը դէպ 'ի հիւսիս Սամարիայի լեռներն են: Այդ դեղին և երկնագոյն գիծե-

ըստ միջոցն տարածուած է կանաչաւ, զարդ ընդարձակութեամբ Սարոնի կամ Էմակի գալտավայրն. ուստի Հրէաստաւ նի լեռներուն հասնելու համար՝ այդ դաշտն կտրելու է: Որչափ առաջ երթաւ և լեռանց բարձրագոյն գագաթներն ելնել, նոյնչափ ալ բնութիւնը ամայի, անմարդի և վայրենի կը գտնես: Բանկարծ ամենայն ինչ աւերակաց մէջ կը թաղուի:

Լեռներն ամեննին մերիններուն չեն նմանիր, ոչ Ալպեանց՝ իրենց սպիտակ կատարներով և ահաւոր պատառուած, ներքին, ոչ Պորկոնեքի գեղազարդ բլուրներուն: Պաղեստինի լեռներն կուհակաճեն ինչ, կամաց կամաց կը բարձրանան և կը խոնարհին, կը բլրանան, բով և պզտիկ ձորակներով՝ մերթ ալ չափազանց ցածնալով և շուտով ալ չկանգնելով՝ փոխանակ նեղ ծործորներու և կիրճերու՝ ընդարձակ դաշտեր կը ձևացնեն. ինչպէս Զաբուղոնի և Յեզրայիլի դաշտորայքն, և կամ կոնաձև սարեր, Օվեանի քանի մը գագաթանց նման, որք մարած հրաբուխներ են: Այս հողուն վրայ գերազանց բան մը կը փայլի. լոյսն՝ զոր բացատրեն անհնարին է: Միւլ չի գիտեր Արևմուտքի մառախլապատ, ամպամած, տոգոյն, մթադնիւս, ցած աստղերով երկինքն, զոր Արևելքի հետ բաղդատելն անկարելի է. լոյսն բնութեան ոգին է, որով միայն տեղոյ մը կամ երկրի մը բուն իսկութիւնն կը ճանչցուի: Չի կրնար ենթադրուիլ թէ ինչ տեսակ լուսոյ բնակարան մ'է՝ այն արեւելեան երկինքն, շրջութիւն մ'է՝ և ոչ այլ ինչ: Գիշերներն իսկ խաւարային չեն. մեր գիշերներն կապուտակ երկինք մը կը ներկայացնեն մեզ, բայց թուի կապոյտ մը, և այն տեսնուած աստղերն՝ այն աստիճանի ցած կ'երևին, որ կարծես ձեռքով կը հասնինք. մինչքան Արևելք՝ գիշերներն պայծառ բնական լուսով մը կը փայլին, տեսակ մը շողացմամբ, որոյ պատճառն անյայտ է. ընդարձակ տարածութեան մէջ աստղերն կը կորսուին, որք մանր մանր

տրեւերու կը նմանին՝ ահագին խորութեան մէջ թաղուած...

Երբոր արևն իր ընթացքն առնէ, ժայռերն և դաշտերն կարծես կը թելենան, և մեղմ կերպարանք մը կ'առնուն, զարմանալի գոյներով. բայց ուր վերոյիշեալ գիշերը իրենց կատարեալ միակերպութիւննին կը պահեն: Դաշտերն իրարու կը յաջորդեն, առանց չփոխութեան, հորիզոնք պայծառ են և ընդարձակ, ոսկեղէն երկնքի մը տարածութեամբ կը ձգուին, առանց ամենին յամպոց կամ 'ի գոլորշեաց խափանուելու. կը խոստովանիմ որ Արևելքի լոյսն զիս սքանչալոյց, և քանի միթիթարութիւն էր ինծի՝ երբ կը մտածէի՝ որ Քրիստոս լոյսն հոգեոց՝ իրեն հայրենիք ընտրած էր այսպիսի լուսաւոր երկիր մը:

Քաղաքները տեսնողն՝ բլրոց գագաթանց և կամ անոնց կողմուն վրայ ցանուած շէնքեր կը կարծէ. տմէնքն ալ իրարու նման են, միմարագոյն բիծեր են, քառակուսի, առանց տանեաց տուններու կոյտ մը, և զրիթէ սեան խորսխի մը նման: Այս տուններն քովէ քով են, և պզտիկ ծակ մ'ունին, որ միանգամայն թէ դրան և թէ պատուհանի տեղ կը ծառայէ: Հեռուէն խոշոր մեղսանոցներու կը նմանին իրենց ըլիմներով, և իրաւ՝ մարդկանց մեղուանոց մ'է խեղճ երևութով: Հեռուէն նայելով ցնորական և մոտոց յափշտակիչ է, այն արեւելեան մոգական լուսովն պայծառացած, որ նաև ցնցոտեաց և խեղճութեանց ալ վսեմ կերպարանք կու տայ. բայց առաջ պէտք չէ երթալ վսեմ զի շուտով կ'աներևութանայ ոյլ, փայլը, և ուրիշ բան չի մնար, բայց եթէ զգուտնք և անպատմելի խեղճութիւն:

Հրէաստան հիմայ բոլորովին միայնութեամբ կը հեծէ, խոր լուսութեան ծոցը թաղուած. այն աղմուկն՝ որ մեր կենսքը և ներկայ քաղաքավարութիւնը կը վրդովէ՝ մեծ ծովը անցնելէն վերջը կամաց կամաց կը դադրի: Արեւստներ չկան, չողեկառաց շառաչը

չի լսուիր, կառքերու երթեկէ չկայ, զործարանաց ծուխը երկնից մաքրու- թեան խափանիչ չի լինիր, ներկայ մարդկութիւնն հոն չի գտնուիր: Եթէ մեր գիշերներն հանդարտ են, և արեւը- քիններն վրդավաւրք չնագայլոց աղա- դակէն և շանց հաջնէն, բայց այսու ամենայնիւ աւելի խաղաղ են. մեր քաղաքներուն և գեղերուն չփոթու- թիւնքն չկան: Հոն Արաքն կը պարծե- նայ, կերկերեալ կոկորդով կը խօսի, և կէս ձայնով մը կ'երգէ: Քաղաքներն ալ ամայի են. ոչ կառք կայ և ոչ ճամ- բայ, ճամբաներն՝ կամ դաշտերը կըտ- րող նեղ գիծերն են, և կամ ցամաք զետոյ անկողինքն. ասոնք ալ երբ ան- ձրեաներն սկսին և կամ ձմեռն հասնի՝ ճախճախաւ են, պէտք է լեռներէն անցնիլ. իսկ երբ տաքը կոխէ՝ երկիրը կը չորնայ, կը սնդանայ, և ամէն դին պատառուածներ կը սկսին. այն ատեն ձիոց կոխած փուռոյն վրայէն երթալու է, որք հովու առեն աչքերու մէջ կը լեցուին: Տեղ տեղ Արաք կամ Տաճիկ կարաւաններ կը հանդիպին, որք դա- ժան և կասկածոտ աչքերնին վրադ կը տնկեն, և ձևերով կամ խօսքով մը բա- րեւելն վերջը կը սկսին հեռանալ, ի- րարու հանդիպող ստուերներու նման: Ետև կը նայիս որ տեսնես, փուռայ ամպ մը ամէն բան ծածկած է:

Երկիրն անապատ է. մեր տեղերն ծառեր կան, որ գետնին իբրև զգեստ մ'են, և իր կենդանութեանն յայտնի նշան. ընդհակառակն Պաղեստին մըտ- նելէն վերջը՝ մնաւ բարով մ'ըսելու է ծառերու. հաղիւ թէ քանի մը տեղ աստ անդ 'ի հնուց մնացած մէկ երկու կաղնիներ, բեկնիկներ, փայլուն տերև- ներով եղջիւրներն, քանի մը թզենի և ձիթենի կը գտնուին. անտառ ը- սուածն՝ երազ մ'է: Լեռներն մերկ են, և ամէն կողմանէ քարուտ. մոխրագոյն ապառաժներուն մէջ տեղ տեղ ափ մը հող կը տեսնուի, որ միշտ զարնան ա- տեն մամուռ և կանանչ է: Լեռանց մէջ ծործորներն և հովիտներն միայ- նակ կը հառաչեն, և մեծ բան է՝ եթէ

յանկարծ ապրիլ ամսոյն մէջ քանի մը Արաք կանայք տեսնուին, որք կ'երթան երբեմն մատղաշ տունկերը և կաղնոյ թուփեր ժողովելու, զորս խուրճ խուրճ գլխոյ վրայ դրած 'ի գիւղաքաղաք կը տանին:

Յանկարծ կը հանդիպի որ լեռան մը ծայրը ճերմակ կէտ մը կը նկատես, կը հարցընես և կ'իմանաս՝ որ քիչ կամ չատ հռչակուած Տաճիկ մարդու գե- րեզմանն է, երբեմն նաև մարդաբէի մը և կամ անուանի պատերազմողի մը:

Կը խոստովանիմ ստուգիւ թէ քանի որ այս երկրիս մէջ էի, և կը մտածէի իմ տեսածներս՝ խիստ զգացմունք մը կը պաշարէր զիս և չէր հեռանար, այս- ինքն է խորին և դառն մաղձոտութիւն մը: Իսկ երբոր հաւատաց թեոք սրտի խորն իջնես, և ըսես դու քեզի՝ թէ այս է ահա Աստուծոյ մը հայրենիքն, աստ քաղց, պարտեցաւ Յիսուս, աստ ծնաւ, մեռաւ և յարեաւ, սիրտն սուրբ ծփա- նք կը խռովի, բայց շատ չանցնիր դառն տխրութիւնն կը պատէ:

Վաթսուն օր անցուցի 'ի Պաղեստին, երկու անգամ՝ հարաւէն հիւսիս, հիւ- սիսէն հարաւ արշաւեցի, թէ ընկերնե- րով և թէ առանձին. բայց չեղաւ օր մը՝ յորում սիրտս քնած ատեն՝ հա- լատոյ զգացմանց հետ՝ այդ խիստ և խորին տխրութիւնը խառն չգտնէի, որ իբրև ցաւալի և անտանելի ծանրու- թիւն մը սրտիս վրայ կը ճնշէր: Իսկ երբ դարձայ անտի՝ ես ինձի հարցուցի. ինչո՞ւ տխուր էիր. ինչո՞ւ լուռ՝ անխօս և քայլած էիր. — և մէկէն իմացայ պատճառն. վասն զի այդ հողոյն իբրև գործրի մ'է տխրութիւնն: Աւերեալ, անբնակ, ամայի աշխարհ մ'է. կահ կարասիքը կորուսած և երեսէ թողուած տուն մ'է. մեռած երկիր մ'է, գերեզ- ման մ'է:

Մեռած երկրի մ'ըրած ազգեցու- թիւնն ալ մեռած է: Հրէաստան մե- ռած է, հողն աւերած, լեռներն ան- փայտ, աղբիւրներն ցամաքած, քարա- ժայռերն մերկ, և այն պայծառ լոյսն, որ կը ծաղէ՝ կարծես թէ բաց գերեզ-

ման մը կը լուսաւորէ: Գոնէ եթէ բնա-
կելի ըլլար՝ մարդկութիւնն շարժմունք
մը կ'ընէր և կը զուարճանար, բայց
ընդհակառակն ուր որ ատենը քանի
մը քաղաքներ կային՝ հիմայ չկան.
չատ շատ գիւղաբնակչութիւն մը կը գտնուի,
և փոխանակ քսան հազար բնակչոյ
քաղաքի մը՝ քանի մը հարիւր անձով
պզտիկ գիւղիկ մը կը տեսնուի: Երու-
սաղէմ՝ Հրէաստանի առաջին քաղաքն՝
հիմայ հազիւ երեսուն հազար բնակիչ
ունի, մայրաքաղաքի շնորհքէն բոլորո-
վին ելած, իրեն միւսրագոյն տուններովն
և գմբէթներովն, բնակիչքն խիստ աղ-
քատ են, ամենեւին ուրախարար և
բերկրաւոր բան մը չունին:

Եթէ այս է Երուսաղէմն՝ մտածեցէք
թէ ինչ պիտի լինին մնացածներն: Աւ-
գեօք այդ խեղճ գեղապիւր ինչ կերպա-
րանք պիտի ունենան. առանց ամենե-

ւին բաղդի ձեռնտուութեանց, առանց
պերճանաց, քիչով գոհանալով՝ օրեր-
նին կ'անյընհն, տնկածնին ժողովելով.
Որչափ որ է պիտոյքնին՝ այդչափ է նաև
իրենց գործօն կեանքն, աւելի մեռնե-
լու՝ քան թէ ապրելու երևոյթ մը կը
ցուցնեն:

Այսպիսի խեղճութեանց մէջ կարելի
է արդեօք մաղձը փարատել և դառնու-
թիւնը հեռու բռնել. ես կը խոստովա-
նիմ որ և ոչ իսկ փորձած եմ: Հրէա-
ստանի մէջ տխրութիւնն՝ անքի առջև
պայծառ կ'երևցնէ զառարկայա, և ըզ-
գացման՝ իր սեփական պաշտօնն կատա-
րել կու տայ. դանդաղ և ծանր մտած-
մանց համար միակ է, ուշադրութեան
և մտաց ամբողջական հակառակ ցնդումը
չլուտով կը վերցընէ, վասն զի մաղձոտ
սրտի մը գաղափարներն՝ աւելի ար-
թուն են և աւելի հաստատ:

ՍՍՀՄ ԱՆԱՎՈՐԻՄՔ ԿԱՄ ԽԱՉՈՐՁԱՆՔ

Կործեմ. քիչ անգամ հանդիպած լի-
նի, որ օտար երկիրներու այցելու ճա-
նապարհորդն, խանձ 'ի հետազօտու-
թեանց, վաստակեալ 'ի ճանապարհէն,
փոշելից և քրոնաթաթաւ, քաղցր
հանգիստ վայելած չլինի, և կամ ան-
պաճոյճ ճաշիկով և վճիտ առուակի մը
ջրով՝ իւր քաղցն և ծարաւն անցուցած՝
ծառի մը հովանոյն ներքե, և անոր
քով գտնուած աւելի կամ ուռաղ ան-
արուեստ յօրինուածովք գրուագեալ
վիմի մը քով, որ ճանապարհորդին կը
ներկայանայ իբրև կայարան մը՝ իւր
տաժանելի պանդխտութեան մէջ:

Այսպիսի կայարանք բազմաթիւ էին
թէ յԱրևմուտս և թէ մանաւանդ. յԱ-
րևելս՝ հին դարուց մէջ. բայց յետ ժա-
մանակաց մասն մի երկաթուղեաց չի-
նութեամբք անհետացան, և մասն մի՝
ժամանակին ժանգն մաշեցուց, և հա-

զիւ ոմոնց հետքն և աւերանքն կտրող
եղան առ մեզ հասնիլ:

Այսպէս յԱրևելս՝ եգիպտացին և Ա-
րաբացին անհուն աւազակայտները
կտրած անցած ժամանակ, երբեմն եր-
բեմն իբրև նախախնամական պարգև
կը գտնէր այն ընդարձակ անապա-
տաց մէջ ջրհոր մը՝ իւր և իր միակ օ-
գնական ձիոյն կամ մանաւանդ ուղտոյն
պապական անցընելու. և այն կը լինէր
իրեն ընթացից շարունակութեան մէջ
բաժանման կէտ մը, մինչև հասնէր ու-
րիչ նմանօրինակ կայարանի մը: Պար-
սիկն և Հնդկաստանցին, որք ոչ ջրոյ
կարօտութիւն ունէին և ոչ անապատ-
ներ կտրելու ստիպեալ էին, կը հանգի-
պէին երբեք երբեք իրենց ճանապար-
հաց վրայ՝ անզարդ և ողորկ մեծամեծ
քարերու, որոց վրայ զրուած կը զըս-
նէին իմաստուն առածներ և կամ բա-